ԿՈՆԴԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՑԼ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕՐՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՏԵՂԱՊԱՀԻՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Տ. ԳԷՈՐԳԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐՍԼԱՆԵԱՆ, ՀԱՐԱՋԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին բոլոր քրիստոնեական եկեղեցիների մեջ ամենից ավելի հավատարմությամբ է պահպանել քրիստոնեական կրոնի դեմոկրատիզմի սկզբունքը: Այդ սկզբունքը ցայտուն երևում է ընտրական հողի վերա, որը Հայ եկեղեցին ի սկզբանե անտի ընդունել և պահել է ցայսօր:

Ընտրական սկզբունքը Հայ եկեղեցու մեջ ունի ժողովական և ժողովրդական բնույթ. բոլոր հայ եկեղեցական և ազգային հաստատությունների մեջ, հոգևոր թե աշխարհական պաշտոնական անձինք, ընտրվում են ընդհանուր ժողովով, որին մասնակցում են հոգևորականությունը և ժողովուրդը միասին, որով բնորոշվում է Հայ եկեղեցու ժողովրդական բնույթը:

Հայոց հայրապետները, պարբերաբար, հայրապետական կոնդակներով վառ են պահել այս սկզբունքը ժողովրդի մեջ: Վերջին անգամ այս սկզբունքը շեշտվեցավ երջանկահիշատակ Գեորգ Ե. Կաթողիկոսի 1915 թվի ապրիլի կոնդակով:

Հայ Եկեղեցու ընտրական ժողովրդական սկզբունքի և կանոնական այլ սահմանումների ու պատմությամբ սրբագործված ավանդությունների հիման վերա կազմված է Ազգային Սահմանադրությունը, որ 1862 թվին Թյուրքական Պետության կողմից հաստատված է և դաշնագրերով նվիրագործված, և որ ցայսօր ի զորու է և Պետության կողմից առ ոչինչ չէ համարված: Սորա ապացույցն է Թյուրքիո կառավարության հավանությամբ 1927 թվին սույն

Կանոնադրության համաձայն, ընդհանուր ժողովով կատարված հանգուցյալ Մեսրոպ Արքեպիսկոպոս Նարոյանի պատրիարքական ընտրությունը:

Ազգային Սահմանադրությունը հաստատված է 1862-ին, իսկ Պատրիարքարանը՝ Ֆաքին Սուլթան Մահմեդի հրովարտակով, հինգ դար առաջ, ո՛չ միայն ստամբուլահայության, այլ բովանդակ Թյուրքիո Հայ Առաքելական համայնքների համար, որոնց ընդհանուր եկեղեցական Պետն է Պոլսո Պատրիարքը, որի ընտրությունն էլ, բնականաբար, պիտի կատարվի Թյուրքիո ընդհանուր հայության քվեներով:

Հուլիսի 14-ին կախակալների կողմից ընտրված ապօրեն Կրոնական ժողովը, որը հայրապետական հրամանով կազմալուծված է, անակնկալ պաշտոնագրով նիստի է հրավիրում իր կողմնակիցներին Գումգաբուի Աթոռանիստ Մայր եկեղեցու մեջ պատրիարքական ընտրելիների ցանկ կազմելու, փոխանակ պատմական Պատրիարքական Աթոռին հավատարիմ մնալու, Ազգային Սահմանադրության տառն ու ոգին պաշտպանելու, որ հաստատված է Պետության կողմից, և հայրապետական հրամանի հանդեպ պատկառանք ունենալու:

Ընդառաջելով պոլսահայ ժողովրդի ցանկության և եկեղեցական կյանքի պահանջին և առաջնորդվելով Հայ եկեղեցու կանոնական իրավունքով, պատմությամբ սրբազործված ազգային ավանդություններով և սոցա վերա հիմնված ու Պետության կողմից հաստատված Ազգային Սահմանադրությամբ, որ այսօր ի զորու է, Հայրապետական կոնդակով պատվիրում ենք Ամենապատվությանդ՝ դիմել Թյուրքական կառավարության և խնդրել պատրիարքական ընտրության ժողով գումարելու իրավունք, և ապա, ղեկավարվելով Ազգային Սահմանադրության ցուցումներով, կատարել պատրիարքական ընտրություն;

Օրհնելով Զեզ և պոլսահայ Մեր սիրեցյալ հոտը, մաղթում ենք հաջողություն պատրիարքական ընտրական ձեռնարկին:

Ողջ լերուք շնորհք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէջ, ամէն:

ԾԱՌՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25-ն մայիսի 1950
Փրկչական ամի եւ ի Տումարիս ՌՃՂԹ,
ի վեցերորդ ամի Հայրապետության Մերոյ,
ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ